ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 47[1]. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնները խախտելը

Բժշկական փորձաքննության իրականացման կարգը խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝

սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև հիսնապատիկի չափով:

Ախտաբանաանատոմիական ~~հերձումների և (կամ) հետազոտությունների~~ դիահերձումների և (կամ) ձևաբանական հետազոտությունների անցկացումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի ~~24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվող պայմանների~~ 41-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված պայմանների կամ կարգերի խախտմամբ ~~հերձում և (կամ) հետազոտություն~~ դիահերձում և (կամ) ձևաբանական հետազոտություն իրականացնողի նկատմամբ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բուժսպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

(47[1]-ին հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-7-Ն, խմբ. 03.10.11 ՀՕ-259-Ն)